Արմինե Մուրադյան

Ով կին...

Ով կին,

թո՛ւյլ տուր, որ սիրեն

լայնափեշ ամառը քո ծնկների

և ծաղիկներ քաղեն

գարունից քո կանաչ,

խոր աշունիցդ բերքահավաք անեն

ու շուրթերիդ ձմեռեն

լացող հասկերը երկնքի,

հետո հորինեն մի նոր՝

սևակոտ եղանակ,

աչքերիդ խորքում ապրելու համար:

Ո՛վ կին,

քայլի՛ր շա՛տ կամաց՝ թաթերիդ վրա,

ժպտալով այս խենթ աշխարհին,

ու թե մի օր հանկարծ լացելու լինես,

դու լացի՛ր այնպես,

որ ճերմակ այտերիդ ջրափոսերում

արցունքներ լցվեն,

ուր արևն անգամ պար գա շողերով:

Ո՞վ կին,

երգի՛ր արտերում մեղեդին դանդաղ,

որ ցորենի հասկը ճաք տա քո ձայնից

և անթիվ-անհամար ծաղիկներ բացվեն,

երբ ջրես նրանց՝ քո սիրով կարմիր…

Այնքա՜ն գեղեցիկ,

գեղեցիկ ես դու՛, կին,

երբ սիրում ես հե՛նց նրան,

ով շոյում է քո հոգին՝

գիշերներում սև

և գրկում է քեզ ամեն առավոտ:

(Եղեգան փող գրական ամսաթերթ 2020/մարտ)